

**ՄԱՍ 2. ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՉԱՐԳԱՅՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ**

Հաշվի առնելով Եռամյա ծրագրով սահմանված՝ վիճակագրության զարգացման առումով ռազմավարական ուղղությունները, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ընդհանուր գործառութային հետևյալ հիմնական միջոցառումները (աշխատանքները).

**2.1. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՉԱՐԳԱՅՈՒՄ**

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է Խորհրդի 56 նիստ (այդ թվում՝ 2007թ.՝ 15, 2008թ.՝ 20 և 2009թ.՝ 21): Նիստերի ընթացքում քննարկվել է 222 հարց (այդ թվում՝ 2007թ.՝ 64, 2008թ.՝ 70 և 2009թ.՝ 88) և արդյունքում ընդունվել 239 որոշում (այդ թվում՝ 2007թ.՝ 60, 2008թ.՝ 69 և 2009թ.՝ 110), որից՝ 96 նորմատիվ (այդ թվում՝ 2007թ.՝ 23, 2008թ.՝ 26 և 2009թ.՝ 47) և 143 անհատական (այդ թվում՝ 2007թ.՝ 37, 2008թ.՝ 43 և 2009թ.՝ 63) որոշում:

1. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների պահանջների կատարման, ինչպես նաև պետական վիճակագրության բնագավառը կարգավորող իրավահարաբերությունների հստակեցման ու կանոնակարգման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են, մասնավորապես, հետևյալ միջոցառումները.

ա/ ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի, Խորհրդի 2007թ. մարտի 23-ի թիվ 07-Ա որոշմամբ հաստատվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը»<sup>1</sup>, որն արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով<sup>2</sup> սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

բ/ ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ.-ի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 1800-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 198-րդ կետի (կատարման ժամկետը՝ 2007թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ մշակվել և Հայաստանի Հանրապետության

<sup>1</sup> Տես նաև՝ <http://www.armstat.am/am/?nid=214>

<sup>2</sup> Ընդունված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2003թ. դեկտեմբերի 25-ին: Հրատարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 7 (306), 04.02.2004թ.

կառավարություն էր ներկայացվել «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. նոյեմբերի 29-ի նիստում): «Գյուղատնտեսական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2008թ. նոյեմբերի 27-ի նիստում ընդունվել է երրորդ ընթերցմամբ ու ամբողջությամբ և դեկտեմբերի 23-ին վավերացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից<sup>3</sup>:

Օրենքն ուղղորդված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական համատարած հաշվառման իրավական հարաբերությունների կարգավորմանը և հնարավորություն կընձեռի վիճակագրական նպատակներով.

- հավաքագրել տեղեկատվություն գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, անասնազվաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրանց օգտագործման վերաբերյալ,

- ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների հաշվառման ամբողջական համակարգ,

- ձևավորել գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստր,

- կատարելագործել վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտը,

- ապահովել միջազգային վիճակագրական տվյալների հետ համադրելիությունը:

Գյուղատնտեսության համատարած հաշվառումը ենթադրում է տվյալների ուղղակի հավաքագրում գյուղացիական տնտեսություններից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից:

զ/ համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 8-րդ և 15-րդ հոդվածների և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշման հավելված 1-ի 253-րդ կետով հաստատված պահանջների, մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամար, 2010 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու և 2011 թվականի մարդահամարի համապետական և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության 2011թ. հերթական մարդահամարի և 2010թ. փորձնական մարդահամարի անցկացման ժամկետները, ինչպես նաև հաստատում է մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին օժանդակելու նպատակով ստեղծվող Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների կազմերը:

Նախագիծն առաջարկությունների ու դիտողությունների է ներկայացվել վիճակագրական տեղեկատվության թվով 20 սպառողների (օգտագործողների), այդ թվում՝ պետական մարմիններ և գիտակրթական հաստատություններ:

<sup>3</sup> Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 76 (666), 30.12.2008թ.

«Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամար, 2010 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու և 2011 թվականի մարդահամարի համապետական և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2009թ. մարտի 26-ին ընդունել է թիվ 301-Ն որոշումը<sup>4</sup>:

դ/ ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 11-ի 5 և 6 մասերով սահմանված դրույթների, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշման հավելված 1-ի 254-րդ կետով հաստատված պահանջները, Ծառայության կողմից մշակվել և վիճակագրական տեղեկատվության թվով 44 սպառողների (այդ թվում՝ պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, հասարակական միություններ, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն) կարծիքին էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Օրենքի նախագիծը միաժամանակ, զետեղվել էր Ծառայության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ արձագանքման ակնկալիքով:

«Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հուլիսի 23-ի նիստում օրենքի նախագիծն արժանացել է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը և ներկայացվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նոյեմբերի 17-ի նիստում<sup>5</sup>:

2. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված դրույթներին համապատասխանեցման նկատառումներից ելնելով, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակներին համապատասխանեցման, և ըստ այդմ, դասակարգչի սկզբունքների ու մոտեցումների կիրառման միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով հաստատվող՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և/կամ դրանց կողմից իրականացվող գործունեության տեսակներին առնչվող նախագծերում նշված (թվարկված) գործունեության տեսակները

<sup>4</sup> Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 18 (684), 08.04.2009թ.

<sup>5</sup> Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր՝ թիվ 64 (730), 16.12.2009թ.

Ծառայության առաջարկությամբ խմբավորվել են՝ համաձայն Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի:

3. Շարունակվել են վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման, ամբողջականացման, ինչպես նաև արդեն իսկ ընդունված ու կիրառվող իրավական ակտերի՝ օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ընդհանուր առմամբ, հարկ է փաստել, որ վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտն արդեն իսկ ձևավորված է և աշխատանքներն ուղղորդված են դրանց կատարելագործմանը: Հաշվետու ժամանակահատվածում, Խորհրդի կողմից, մասնավորապես, հաստատվել են հետևյալ նորմատիվ իրավական ակտերը.

ա/ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007թ. հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հուլիսի 24-ի թիվ 58 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 01-Ն որոշում<sup>6</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006թ. նոյեմբերի 22-ի թիվ 231-Ն հրամանով հաստատվել և 2007թ. հունվարի 1-ից գործողության մեջ էր դրվել Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի վերախմբագրված տարբերակը (մշակված Եվրամիության NACE Rev 1.1 դասակարգչի հիման վրա), սույն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից նախկինում հաստատված համանուն դասակարգիչը:

բ/ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007թ. հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի N110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 10-Ն որոշում և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007թ. օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ 12-Ն որոշում<sup>7</sup>:

Որոշումների ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշման ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման և Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների անվանումների վերանայման անհրաժեշտությամբ:

գ/ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը 2008 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ազգային

<sup>6</sup> Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 5 (245), 15.02.2007թ.

<sup>7</sup> Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 20 (260), 16.07.2007թ.

վիճակագրական ծառայության մարդահամարի գործառնական ստորաբաժանում ստեղծելու և դրա կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 26-Ն որոշումը<sup>8</sup>:

Սույն որոշման ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության 2007-2009 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի 2.4. բաժնի 2.4.5 մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության 2009թ. պետական բյուջեի գործառնական դասակարգման Ծառայության «2011 թվականի մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (01.03.02.04) և «2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման համար կարողությունների զարգացում» (01.03.02.05) ծրագրերով:

դ/ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը 2009 թվականի հոկտեմբերի 2-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի N 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 15-Ն որոշումը<sup>9</sup>:

«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի N 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված նորմատիվ որոշմամբ հաստատվել է Ծառայության աշխատակազմին հանձնվող գույքի կազմն ու չափը: Ծառայության աշխատակազմին հանձնվող գույքի կազմն ու չափը անհրաժեշտ է հաստատել Խորհրդի անհատական որոշմամբ, քանի որ այն, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի, կրում է անհատական բնույթ՝ չի պարունակում իրավական նորմ, սահմանում է վարքագծի կանոններ միայն Ծառայության աշխատակազմի համար: Նախագիծն ընդունելուց հետո Ծառայության աշխատակազմին հանձնվող գույքի կազմն ու չափը հաստատվել է Խորհրդի անհատական որոշմամբ:

4. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Խորհրդի նորմատիվ որոշումների՝ որպես գերատեսչական նորմատիվ ակտ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 96 նորմատիվ իրավական ակտեր (որից՝ 73 վիճակագրական դիտարկման փաստաթղթեր ու դրանց լրացման հրահանգներ կամ դրանց փոփոխություններ ու լրացումներ), այդ թվում ըստ տարիների՝ 2007թ.՝ 23 (18), 2008թ.՝ 26 (22) և 2009թ.՝ 47 (33):

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել, որ հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերը համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների և Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչներով սահմանված սկզբունքներին ու մոտեցումներին: Բացի այդ, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման

<sup>8</sup> Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 3 (321), 26.01.2009թ.

<sup>9</sup> Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 29 (347), 02.11.2009թ.

նկատառումներով պայմանավորված, փոփոխվել են վիճակագրական դիտարկման մի շարք փաստաթղթերի ներկայացման ժամկետներն ու պարբերականությունը:

5. Հաշվի առնելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի, ինչպես նաև Խորհրդի 2002թ. մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի դրույթները, 2007թ. ընթացքում Խորհուրդն անհատական որոշումներով հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական թվով 9 հաշվետվությունների (և/կամ դրանցում փոփոխություններին և լրացումներին), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 7 հաշվետվություններ (և դրանց լրացման հրահանգներ), Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվություն, 2008թ. ընթացքում՝ վարչական վիճակագրական թվով 6 հաշվետվությունների (և/կամ դրանցում փոփոխություններին և լրացումներին), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 2 հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգներ, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 3 հաշվետվություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվություն և 2009թ. ընթացքում՝ թվով 5 հաշվետվությունների (և/կամ դրանցում փոփոխություններին և լրացումներին), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 4 հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգներ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվություն:

## 2.2.ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐ

Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ՝ ՏՏԸՀ (1997թ. դեկտեմբեր) և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ՝ ՏՏՀՍ (1996թ. մարտ): Թվարկվածներից ՏՏԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ու Հայաստանի Հանրապետու-

թյան կենտրոնական բանկի մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՄ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), կատարելով կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՏՏՀՄ-ն պարունակում է մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է Արժույթի միջազգային հիմնադրամի Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> : Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) անգլերեն լեզվով ՏՏՀՄ-ի տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է Ծառայության կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/> : Ծառայության պաշտոնական կայքէջի «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» բաժնի «Մեթատվյալներ» ենթաբաժնում գետեղված են նաև մեթատվյալների հայերեն և ռուսերեն տարբերակները:

ՏՏՀՄ-ն ներառում է 21 խումբ ցուցանիշներ, որոնք ընդգրկված են իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներում: Այդ ցուցանիշների արդիականացումն իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ եռամսյակային կտրվածքով: Տվյալների արդիականացման ժամկետները ներկայացված են Ծառայության կողմից վարվող նախապես տարածման օրացույցի էջում՝ <http://docs.armstat.am/nsdp/> :

ՏՏՀՄ-ի շրջանակում 2008թ. ապրիլի 14-ից 25-ը Հայաստան է այցելել Արժույթի միջազգային հիմնադրամի համապատասխան առաքելության 7 մասնագետներից բաղկացած խումբ, որի նպատակն էր կազմել Հայաստանում (Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն) տվյալների վերաբերյալ Ստանդարտների և կողերի պահպանման զեկույցը (ROSC) Տվյալների որակի գնահատման ձևաչափի (DQAF) շրջանակում: 2009թ. փետրվարի 10-ին Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայքէջում (<http://www.imf.org/external/np/rosc/rosc.asp>) գետեղվել է Հայաստանի վերաբերյալ Արժույթի միջազգային հիմնադրամի Ստանդարտների և կողերի պահպանման զեկույցը, որը ներառում է տվյալների որակի գնահատման ձևաչափի օգտագործմամբ մանրամասն գնահատումը: Չեկույցը ներառում է վիճակագրական համակարգի տվյալների 6 խմբերի (Ազգային հաշիվներ, Սպառողական գների ինդեքս, Արտադրողների գների ինդեքս, Պետական ֆինանսների վիճակագրություն, Դրամավարկային վիճակագրություն և Վճարային հաշվեկշռի վիճակագրություն) գծով ընդհանուր առմամբ 132 համապատասխանության (ստանդարտների և կողերի պահպանման) գնահատական: Գնահատականները բաշխված են հետևյալ կերպ. 108 բաղադրիչի գծով համապատասխանություն (ստանդարտների և կողերի պահպանում), 24 բաղադրիչի գծով՝ հիմնականում համապատասխանություն (ստանդարտների և կողերի պահպանում):

Ստանդարտների և կոդերի անհամապատասխանություն արձանագրված չէ (չպահպանման կամ հիմնականում չպահպանման գնահատականներով բաղադրիչներ առկա չեն):

### 2.3.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից շարունակվել են համապատասխան դասակարգիչների մշակման, գրանցման և ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

1. 2007թ. մշակվել են «Ինստիտուցիոնալ հատվածների դասակարգում» և «Գործառնությունների և այլ հոսքերի դասակարգում» դասակարգիչները, որոնց համար հիմք են հանդիսացել «Եվրոպական հաշիվների համակարգ - 95»-ի շրջանակում՝ ազգային հաշիվների մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփման նպատակով կիրառվող համանուն դասակարգումները:

2. Տեխնիկատնտեսական ու սոցիալական տեղեկատվության դասակարգիչների ներդրման նպատակով, հիմք ընդունելով Եվրոպական Համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի նոր խմբագրությունը (NACE Rev.2) 2008-2009թթ. իրականացվել է Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2007թ. վերանայված տարբերակի թարգմանություն և վերանայված տարբերակի ներդրման կազմակերպական միջոցառումների իրականացում:

«Տնտեսական գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի ներդրման աշխատանքների համատեքստում, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2009թ. հունիսի 3-ի թիվ 372-Ն որոշմամբ դասակարգիչը հաստատվել և հուլիսի 1-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում<sup>10</sup>: Մինչ հաստատումը դասակարգչի փոփոխությունների և լրացումների նախագիծը կարծիքի է ներկայացվել նաև թվով 56 շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև զետեղվել Ծառայության ինտերնետային կայքէջում՝ այլ սպառողների առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով:

3. 2009թ.-ից սկսվել են նաև ըստ տնտեսական գործունեության տեսակների արտադրանքի դասակարգչի 2008 թվականի վերանայված տարբերակի թարգմանության ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Նշված դասակարգչի հաստատումն, ըստ էության, նախադրյալներ է ստեղծում երկրում տեխնիկատնտեսական տեղեկատվության կոդավորման միասնական ու արդեն իսկ ավարտուն և ամբողջական՝ «գործունեության տեսակ - արտադրանք» դասակարգչային գործիքակազմի ներդրման համար:

4. Հայաստանի Հանրապետությունում «Վիճակագրության համար տարածքային միավորների անվանացանկ» (ՆԱԹՄ) (հաստատված Եվրախորհրդարանի 2003 թվականի մայիսի 26-ի թիվ 1059/2006 որոշմամբ) դասակարգչի ներդրման նպատակով կատարված ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» նախագիծ, որը 2009թ.

<sup>10</sup> Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 22 (340)<sup>1</sup>, 16.07.2009թ.



կարծիքի է ներկայացվել թվով 12 շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև զետեղվել Ծառայության ինտերնետային կայքէջում՝ այլ սպառողների առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով: Խնդրո առարկա դասակարգիչն ընդունվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010թ. հունվարի 25-ի թիվ 01-Ն որոշմամբ<sup>11</sup>:

5. Չուգահեռաբար, շարունակվել են նաև տնտեսական գործունեության տեսակների և արտադրանքի դասակարգիչների՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որի առնչությամբ մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) արդեն իսկ համապատասխանեցվել են նաև դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

6. Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրման նախադրյալների ձևավորման նպատակով հաշվետու ժամանակահատվածում լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Ծառայության բիզնես ռեգիստրի կայացման ուղղությամբ, օգտագործելով տեղեկատվության հավաքագրման ինչպես ուղղակի (այդ թվում՝ միջազգային համագործակցության շրջանակում իրականացված համապատասխան հետազոտությունների միջոցով) այնպես էլ անուղղակի (վարչական ռեգիստրների միջոցով) աղբյուրները:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից, որպես համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից, սահմանված ժամկետներում և պարբերականությամբ ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ Ծառայության բիզնես ռեգիստրի վարման համար անհրաժեշտ տվյալները: Բիզնես ռեգիստրի ձևավորման և արդիականացման նպատակով տարեկան պարբերականությամբ հավաքագրվել և արդիականացվել են նաև վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալները:

Բիզնես ռեգիստրի տվյալների բազայի արդիականացման և ամբողջականացման նպատակով Եվրամիության վիճակագրական ծառայության SUFՍ ծրագրի «Վիճակագրություն-10» պայմանագրի «Բիզնես ռեգիստր» բաղադրիչի շրջանակում 2007թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անց է կացվել 2300 իրավաբանական անձանց ընտրանքային հետազոտություն:

Ընդհանուր առմամբ հարկ է փաստել, որ նշված և նախկինում իրականացված մի շարք հետազոտությունների արդյունքներով հնարավոր է եղել ձևավորել հնարավորինս ամբողջական բիզնես-ռեգիստր (իրավաբանական անձանց մասով), նախադրյալներ ստեղծելով հետագայում հիմնական շեշտադրումը դեպի դրա որակական կատարելագործումն ուղղորդելու համար:

7. Բիզնես ռեգիստրի կայացումն իր հերթին փոխկապակցվում է նաև ընտրանքային մեթոդների ամբողջական ներդրման և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ինտենսիվացման հետ. այդ առնչությամբ, հաշվետու ժամանակահատվածի տարեկան

<sup>11</sup> Հրապարակված է Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 7 (359), 15.03.2010թ.:

ծրագրերով նախատեսված աշխատանքների ենթատեքստով, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառմամբ, իրականացվել են նախատեսված բոլոր վիճակագրական հետազոտությունների ընտրանքները և ստացված արդյունքների տարածման աշխատանքները: